(պայմանագրի ապահովում) և թիվ 20 45 40 3930001/16 բանկային երաշխիքով (որակավորման ապահովում) գումարները՝ նախատեսված համապատասխանաբար՝ 2.120.000 ՀՀ դրամ և 3.180.000 ՀՀ դրամ՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Նման պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով հայցը ենթակա է մասնակի բավարարման, դատարանը գտնում է, որ հայցի ապահովման միջոցը պետք է պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հաշվի առնելով, որ հայցը բավարարվել է մասնակի, և հայցվորը հայց ներկայացնելիս օրենքով սահմանված կարգով վճարել է պետական տուրքի գումարը, գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 30.000 ՀՀ դրամ՝ որպես հայցապահանջի բավարարված մասին համապատասխան պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-րդ, 362-րդ հոդվածներով, 27.2-րդ գլխի կանոններով ՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «ԱՍ-Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի և «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի միջև 18.11.2022 թվականին կնքված «ՀՀԳՄՀ-ԳՀԾՁԲ-22/49-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի կողմից միակողմանի լուծելու մասին 05.04.2023 թվականի որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի 17.04.2023 թվականի որոշումը՝ «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին անվավեր ճանաչելու և Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ին 4.760.000 ՀՀ դրամ՝ որպես «ՀՀԳՄՀ-ԳՀԾՁԲ-22/49-1» ծածկագրով գնման պայմանագրի 2-րդ և 5-րդ չափաբաժիններով կատարված աշխատանքների դիմաց պակաս վճարված գումար վճարելուն պարտավորեցնելու պահանջների մասին, բավարարել մասնակի:

1.1. «ԱՍ-Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների

նախարարության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի և «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ի միջև 18.11.2022 թվականին կնքված «ՀՀԳՄՀ-ԳՀԾՁԲ-22/49-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի կողմից միակողմանի լուծելու մասին 05.04.2023 թվականի որոշումը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքի ղեկավար Ա. Խաչատրյանի 17.04.2023 թվականի որոշումը՝ «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.2. «ԱՍ-Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանին «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ին 4.760.000 ՀՀ դրամ՝ որպես «ՀՀԳՄՀ-ԳՀԾՁԲ-22/49-1» ծածկագրով գնման պայմանագրի 2-րդ և 5-րդ չափաբաժիններով կատարված աշխատանքների դիմաց պակաս վճարված գումար վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանից հօգուտ «ԱՍ-Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Պետական տուրքի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Հայցի ապահովման միջոցը՝ արգելել «Ակբա Բանկ» ԲԲԸ-ին վճարել «Ակբա Բանկ» ԲԲԸ-ի կողմից «ԱՍ-Նախագիծ» ՍՊԸ-ին 06.12.2023 թվականին տրամադրված թիվ 20 45 40 393001/17 բանկային երաշխիքով (պայմանագրի ապահովում) և թիվ 20 45 40 3930001/16 բանկային երաշխիքով (որակավորման ապահովում) գումարները՝ նախատեսված համապատասխանաբար՝ 2.120.000 ՀՀ դրամ և 3.180.000 ՀՀ դրամ, պահպանել մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ _____թ.:

ԴԱՏԱՎՈՐ Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ